ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Պետական մարմնի անվանումը՝ Էկոնոմիկայի նախարարություն

Ամփոփաթերթի կազմման ամսաթիվը՝ 08.04.2025

#	Դիտողության/ առաջարկի բովանդակությունը	Առնչվող ոլորտը, ծրագիրը, միջոցառումը	Դիտողության/ առաջարկի հեղինակը	Դիտողության/ առաջարկի ներկայացման ամսաթիվը	Պետական մարմնի դիրքորոշումը/ արձագանքը դիտողության/ առաջարկի վերաբերյալ	Դիրքորոշման ներկայացման ամսաթիվը
1	2	3	4	5	6	7
1.	Առաջարկվում է խոշորացման ուղղությանը ուշադրություն դարձնել, քանի որ գուցե լինի հողերի դատարկման վտանգ կամ չգտնվեն այդքան գյուղացիներ, ովքեր կցանկանան միավորել հողերը:	1022 Գյուղատնտեսության խթանման ծրագիր	Արարատի խաղողագործների միություն ՀԿ Նախագահ Արսեն Սիմոնյան	03.04.2025	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակին մանրամասնորեն ներկայացվել է 1022- Գյուղատնտեսության խթանման ծրագիր «12011- Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորմանը (կոնսոլիդացիային) աջակցություն» միջոցառումը, որով նախատեսվում է հողերի խոշորացման համակարգի ներդրումը՝	03.04.2025

					համեմատական տանելով նաև արտերկրյա փորձի /Ավստրիա, Հոլանդիա/ վերջինիս արդյունավետությունը դիտարկելով նաև բիզնեսի տեսակետից:	
2.	Առաջարկվեց ուշադրություն դարձնել փոքր և միջին ջերմոցային տնտեսություններ ներդրման պետական աջակցության ծրագրին, մասնավորապես այն մասով, որ շահառուների մի մասի կողմից իրենց պարտավորությունները սուբսիդիայի նկատմամբ ավարտելուց հետո կառուցված ջերմոցները վաճառքի են հանում:	1187 Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	Արարատի խաղողագործների միություն ՀԿ Նախագահ Արսեն Սիմոնյան	03.04.2025	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակը տեղեկացվել է ծրագրի մանրամասներին, մասնավորապես այն մասով, որ պարտավորությունը սուբսիդիայի նկատմամբ ավարտելուց հետո եթե շահառուն ցանկանում է ջերմատունը վաճառել և առկա է գնորդ, ապա դա միայն ողջունելի է, սակայն ևս մի կարևոր հանգամանք մինչև 3000 հա ջերմատները ունեն 5 տարի օտարման սահմանափակում, իսկ խոշորների մասով գործում է 7 տարի, ավելին ծրագրից դուրս գալուց շահառուն պարտավորվում է լրացուցիչ վճարներով /նաև ներառյալ ԿԲ տոկոսադրույքը/ ետ վերադարձնել պետության միջոցները, հետևաբար եթե	03.04.2025

					շահառուն, տեղեկացված լինելով բոլոր դրույթներին, որոշում է ինչ-որ փուլից դադարեցնել և դուրս գալ ծրագրից, ապա այդ ռիսկը կրում է ամբողջությամբ:	
3.	Առաջարկվեց ուշադրություն դարձնել նաև տարածքային կառավարման մարմինների / համայնքներ/ կողմից իրազեկման մասով միջոցառումներին:	1022 Գյուղատնտեսության խթանման ծրագիր	Արարատի խաղողագործների միություն ՀԿ Նախագահ Արսեն Սիմոնյան	03.04.2025	Հեղինակին ներկայացվեց այն, որ համայնքային իշխանությունները անկախ մարմիններ են և ոչ ՀՀ ԷՆ, ոչ մարզպետարանները կառավարող մարմին չեն իրենց, մենք կարող ենք համագործակցել իրենց հետ, մեկի հետ լավ է ստացվում համագործակցությունը, մեկի հետ թերի կամ գուցե չի ստացվում: Մենք շարունակաբար փորձում ենք աշխատել բոլորի հետ և բերել կառուցողական դաշտ:	03.04.2025
4.	Ծրագիրը սուբսիդավորման արդյո՞ք ենթարկվում են մոնիթորինգի և կա՞ն հրապարակային տվյալներ չարաշահումների վերաբերյալ:	1022 Գյուղատնտեսության խթանման ծրագիր	ACSES հիմնադրամ Արմինե Պետրոսյան	03.04.2025	Քննարկման մասնակիցը տեղեկացվել է, որ ոչ միայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից, այլ նաև ՀՀ-ում գործող բոլոր կառույցների կողմից վերջիններս անընդհատ մոնիթորինգի են	03.04.2025

					ենթարկվում, սակայն անձնական տվյալների պաշտպանվածության տեսակետից դրանք չեն հրապարակվում: Դրանց հիման վրա տեղի են ունենում որոշակի գործընթացներ: Կարող ենք ընդհանրական արդյունքներով կիսվել, օրինակ այս կամ այն ծրագրի շրջանակներում այս կամ այն պահանջներ են ներկայացվել ֆինանսական կառույցներին, կամ այսքանը դադարեցվել են կամ գտնվում են հաշվեքննման կամ այլ փուլերում:	
5.	Առաջարկվեց ուշադրություն դարձնել նաև սերմարտադրության աջակցությանը, արդյո՞ք 2026 թվականին նախատեսված է աջակցություն թե ոչ:	1059 Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	Իշխան Հովսեփյան «Սերմեր և տնկանյութեր արտադրողների ասոցիացիա» ՀԿ Արսեն Սիմոնյան Արարատի խաղողագործների միություն ՀԿ Նախագահ	03.04.2025	Քննարկման ընթացքում առաջարկի ներկայացնողներին տեղեկացվել է, որ 2026թ. սերմարտադրության աջակցություն նախատեսված չէ, սակայն բուսաբուծության աջակցության ծրագիրը անուղղակի ձևով խթանում է սերմնարտադրությունը: Բացի այդ ԱՄՆ գյուղդեպարտամենտի հետ իրականացվել է խորը վերլուծություն և	03.04.2025

					հերթական անգամ համոզվել ենք, որ սերմնաբուծությունը և սերմնարտադրությունը մեծ կարևորություն ունի մեր երկրի համար, և սա կդիտարկենք առաջարկություն և առաջին իսկ հնարավորության դեպքում ՀՀ ՖՆ հետ կդիտարկենք այն որպես նոր նախաձեռնություն և հնարավոր է վերջինիս հետ ներառենք նաև տնկարանների աջակցությունը:	
6.	Առաջարկվեց ուշադրության կենտրոնում պահել նաև տնկարանների աջակցության ծրագիրը:	1059 Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	Արսեն Սիմոնյան Արարատի խաղողագործների միություն ՀԿ Նախագահ	03.04.2025	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակը տեղեկացվել է, որ ՀՀ դարձել է Բույսերի սորտերի պահպանության միջազգային միության անդամ և բուծողի իրավունքների պահպանությունը կարևոր է, նաև տնկանյութի հավաստագրման համակարգի գործարկմանը զուգահեռ: Տնկանյութի հավաստագրման գործընթացն ընթացքի մեջ է և այն	03.04.2025

					տնկարանները, որոնք արտադրում են ցածրորակ տնկանյութ, պետք է մարդիկ խուսափեն ձեռքբերել այդ տնկանյութերը, նման միտք առաջացավ 2020թ., երբ լոկ 14 անուն տնկարան հավաքագրվեց, որոնցից միայն 2 կամ 3 էին բավարարում տնկարանային տնտեսության չափանիշներին: Զուգահեռ համակարգի ներդրումը մեծ հնարավորություն կտա հասանելի դարձնել բարձրորակ սորտերի սերմերը և տնկանյութը, կավելանան ներդրումները, կբարձրանա վստահությունը հայ արտադրողների նկատմամբ, որը մինչ այդ բացակայում էր: Նույնը վերաբերում է նաև ջերմատներին. միջազգային մեծ կազմակերպություններ ցանկանում են հիմնել վարդերի կտրոնների արտադրությանը հիմնել ՀՀ-ում և արդեն իսկ	

					բուծողի իրավունքների գրանցման գործընթացը սկսվել է:	
7.	Ինտենսիվ այգեգործության ծրագիրն արդյո՞ք գործում է կամ ենթադրվում է որ շարունակական կլինի:	1187 Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	Հայաստանի Այգեգործների Ասոցիացիա ՀԿ անդամ Աննա Գրիգորյան	03.04.2025	Ծրագիրը մինչև 2025 թվականի ավարտն է, և յուրաքանչյուր կառավարություն ունի իր տեսլականը հաջորդ 5 տարիների համար, 2026-2030թթ. որ ոլորտներ ներդրումներ իրականացնեն, կարծում ենք 2025 թվականի ընթացքում ավելի կիստակեցվի 2026-2030թթ. տեսլականը, կկայացվի որոշում, թե երբ ու ինչ տեսքով այն երկարացնել, իսկ ինչ վերաբերում է կաթիլային ոռոգման համակարգին, մոտեցումն այնպիսին է, որ պիտի երկարացվի, ինչ վերաբերում է այգետնկմանը, այս պահին գործում է միայն վարկային բաղադրիչով, պետք է վերլուծենք հասկանանք արդյո՞ք բյուջեն բավականցնում է այս ուղղության վրա շարունակենք ներդրում իրականացնել, քանի որ մինչ օրս մինչ 200 մլրդ. դրամի այգետնկում է իրականացվել, և այսօր	03.04.2025

					սուբսիդավորվող բյուջեն հասնում է շուրջ 17 մլրդ. դրամի: Ելնելով այս ամենից հստակեցման կարիք ունի հետագան:	
8.	Իսկ մոնիթորինգի շրջանակներում եղե՞լ են կիրառվող թունաքիմիկատների թունունակության բարձր մակարդակի նկատմամբ որևէ վերահսկողություն:	1187 Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	Հայաստանի Այգեգործների Ասոցիացիա ՀԿ անդամ Աննա Գրիգորյան	03.04.2025	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակը տեղեկացվել է, որ այդ վերահսկողության գործառույթը վերապահված է սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին:	03.04.2025
9.	Արդյո՞ք առկա է օրգանական պարարտանյութերի կիրառմանն ուղղված պետական աջակցության ծրագիր:	1059 Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	Հայաստանի Այգեգործների Ասոցիացիա ՀԿ անդամ Աննա Գրիգորյան	03.04.2025	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակին ներկայացվել են ճիշտ լուծումները, սպասվելիք անելիքները, ինչպես նաև այն, որ միջազգային կազմակերպությունների հետ տեղի են ունեցել քննարկումներ, թե ինչ ձևաչափով կարող են իրականացնել այն. միգուցե նախատեսվի օրգանական գյուղատնտեսությանն ուղղված ծրագիր, որը վերջինս կխթանի պահանջարկը, կա սպառման, իրացման խնդիր: Կարելի է սկսել Սևանի ավազանից, որի խնդիրը միայն քիմիական	03.04.2025

					պարարտանյութերի մասով չէ և այս առումով որևէ պետական աջակցության ծրագիր իրականացնելը:	
10.	Արդյո՞ք նախատեսվում է պալարների, սերմերի վերահսկման, գյուղատնտեսական նշանակության հողատարածքների, գյուղ. մթերքի կառավարման որևէ ծրագիր:	1059 Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	«Լարի» պանիր արտադրող իրավաբանական անձանց միության տնօրեն Արմեն Գիգոյան	03.04.2025	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակը տեղեկացվել է, որ նախարարությունն ամեն հնարավոր բան անելու է ոլորտում առկա արտադրողներին, կապալառուներին ներգրավելու հարցում՝ իրենց վրա որոշակի պատասխանատվություն դնելով:	03.04.2025
11.	Արդյո՞ք նախատեսվում է կաթի արտադրության աջակցության ծրագիր	1022 Գյուղատնտեսության խթանման ծրագիր	«Հայ կաթ» կաթնամթերք արտադրողների միության նախագահ Խաչատուր Պողոսյան «Լարի» պանիր արտադրող իրավաբանական անձանց միության տնօրեն Արմեն Գիգոյան	03.04.2025	Նման ծրագրի մշակումը և իրականացումը գտնում ենք ոչ նպատակահարմար,քանի որ նման ծրագրի իրականացման դեպքում հնարավոր չի լինելու ապահովել վերամշակման հանձնող կաթ արտադրող շուրջ 100 հազար ֆերմերների կողմից արտադրված կաթի ծավալների նույնականացումը:	03.04.2025
12.	Արոտավայրերի դեգրադացման դեմ ուղղված ի՞նչ միջոցառումներ են առկա:	1086 Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում	Հայաստանի Այգեգործների Ասոցիացիա ՀԿ քարտուղար	03.04.2025	Քննարկման ընթացքում առաջարկի հեղինակը տեղեկացվեց, որ շուրջ 101 համայնքներում իրականացվել են	03.04.2025

			Տաթևիկ Արզանյան		ջրարբիացման աշխատանքներ ՀԲ ծրագրի շրջանակներում:	
13.	Առաջարկվում Հայաստանի արտահանման 2025-2030 թվականների և Ձեռներեցության զարգացման ռազմավարություններով նախատեսված գումարները նախատեսել բյուջեում:	1104 Գիտելիքահենք, նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցության ծրագիր 1165 Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր	ACSES հիմնադրամ Հայկազ Ֆանյան	04.04.2025	Առաջարկը ընդունվեց: Արտահանման ռազմավարությունը դրված է E-draft ում և Կառավարություն դեռ չի գնացել, եթե կառավարության կողմից հաստատվի, հետագայում բյուջետային հայտի շրջանակներում կներկայացվի: Բացի այդ նախորդ տարիներին ներկայացվել են արտահանման ռազմավարությանը համապատասխան հայտեր, որոնք սակայն չեն ընդունվել: Ձեռներեցության ռազմավարությունը դեռ քննարկումների փուլում է:	04.04.2025
14.	Տոկոսագումարների սուբսիդավորման ի՞նչ գումարներ են նախատեսվել 2025 թվականին, քանի որն նախորդ տարիների համեմատ նկատվում է սուբսիդավորման տոկոսագումարների աճ /3 մլրդ աճել է/ և ո՞ր ոլորտային ուղղություններն են	1104 12001 Տնտեսության արդիականացման միջոցառմանը պետական աջակցություն	<<Հայաստանի Լիզինգատուների Ասոցիացիա>> ՀԿ Արսեն Բազիկյան	04.04.2025	2025թ. նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման բյուջեն 16.0 մլրդ դրամից դարձել է 19.4 մլրդ դրամ: Միաժամանակ Քննարկումներ են տեղի ունենում և կան ոլորտներ, որոնք նախատեսվում է ընդգրկել:	04.04.2025

	նախատեսվում ընդգրկել:					
15.	Առաջարկվում է թողարկման և վարկանիշավորման, ինչպես նաև արդիականացման ծրագրերը համատեղել:	1104 Գիտելիքահենք, նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն 1165 Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա Կարեն Զաքարյան	04.04.2025	Առաջարկն ընդունվել է: Շրջանառվում է համապատասխան փոփոխությունների նախագիծ:	04.04.2025
16.	Արդյո՞ք հաստատվել է մասնագիտական կարողությունների զարգացման ծրագիրը:	1104 Գիտելիքահենք, նորարարական տնտեսությանը և փոքր ու միջին ձեռնարկատիրությանը աջակցություն	ՀՀ դեղ արտադրողների միության տնօրեն Թագուհի Փիրուզյան	04.04.2025	Ծրագիրը չի հաստատվել: Նախատեսվում է ոչ թե գումար փոխհատուցել, այլ վեր հանել կարիքները, որ անհրաժեշտ է որևէ ոլորտում որևէ հմտություն ձևավորելիս և այդ դեպքում նոր դոնոր կազմակերպությունների աջակցությամբ դա կիրականացվի: Ուղղակի փոխհատուցում այն չի ենթադրում:	04.04.2025
17.	Տուրիզմի բյուջեն նվազել է և կարծես նվազման միտում ունի, առաջարկվում է քայլեր այն վերականգնելու գծով, քանի որ ամեն մի զբոսաշրջիկ իրենից	1190 Զբոսաշրջության աջակցության ծրագիր	«ՏՈՒՐԻԶՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ Մեխակ Ապրեսյան	04.04.2025	Այնպես չէ, որ ոլորտի հանդեպ միտումնավոր բացասական քայլեր են իրականացվում, հայտը ներկայացվել է ՀՀ ՖՆ: Նախորդ տարի ևս Բյուջետային հայտը ներկայացվել է, որը	04.04.2025

	ենթադրում է ուղղակի ազդեցություն ՀՆԱ վրա:				սակայն ամբողջ ծավալով չի ընդունվել:	